ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/34/1

ք. Վեդի «31» «հոկտեմբերի» 2022թ.

«Վեդու համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և «Ինտերէներգիա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Եսայան ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3 900 000 (երեք միլիոն ինը հարյուր)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույնպայմանագրովևսույնպայմանագրիհիմանվրակնքված համաձայնագրերովպարտավորություններնամբողջությամբկամմասնակիորենչկատարելուհամարկողմերն ազատվումենպատասխանատվությունից, եթեդաեղելանհաղթահարելիուժիազդեցությանհետևանքով, որըծագելսույնպայմանագիրըկնքելուցհետո, նորըկողմերըչէինկարողկանխատեսելկամկանխարգելել:Այդպիսիիրավիճակներեներկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականևարտակարգդրությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերըևայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժի ազդեցությունըշարունակվումէ 3 (երեք) ամսիցավելի, ապակողմերիցյուրաքանչյուրնիրավունքունիլուծելպայմանագիրը՝այդմասիննախապեստեղյակպահելովմյուս սկողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրնուժիմեջէմտնումկողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրիցծագածկողմիվճարայինպարտավորությունըչիկարողդադարելպայմանագրիցծագած՝հակը

[22]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

նդդեմպարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիիրավունքըչիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 ՊայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցմանժամկետըկարողէերկարաձգվելմինչև պայմանագրով այդժամկետըլրանալը՝Կատարողի առաջարկությանառկայությանդեպքում՝ պայմանով, որՊատվիրատուիմոտչիվերացելծառայության օգտագործմանպահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությանմատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցմանժամկետըկարողէերկարաձգվելմեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնությունձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվու մեն ՀՀ դատարաններում:

7.11Սույնպայմանագիրըկազմված է 12 էջից, կնքվումէերկուօրինակից, որոնքունեննհավասարազորիրավաբանականուժ: Սույնպայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածներըհանդիսանումենպայմանագրիանբաժանելիմասը, յուրաքանչյուրկողմինտրվումէ պայմանագրիմեկօրինակ:

7.12ՍույնպայմանագրինկատմամբկիրառվումէՀայաստանի Հանրապետությանիրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքումն Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վեդու համայնքապետարան | «Ինտերէներգիա» ՍՊԸ |
| ք. Վեդի,Թումանյան 6 | Ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. 12/70 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| ՀՀ900422102336 | ՀՀ 220290123532000 |
| ՀՎՀՀ 04241258 | ՀՎՀՀ 01847856 |
| Համայնքի ղեկավար՝ Գ. Սարգսյան | Տնօրեն՝ Հ. Եսայան |
| ------------------------ (ստորագրություն) | ------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«31» հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/34/1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱդ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Ընդհանուր քանակը | Ընդհանուր գումար/ ՀՀ դրամ | մատուցման | |
| | | | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1 | 71241200 | *ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան և Գոռավան բնակավայրերի* ***/մանկապարտեզ/*** *նախադպրոցական հաստատությունների կառուցման* **աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն** | Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն Հավելված 1.ի | դրամ | 1 | 3900000 | Վեդի համայնք | Ֆինանսական միջոցների առկայության դեպքում երկկողմանի կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | |
|---|---|
| Կառուցվող նախադպրոցական հաստատության անվանումը | ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան և Գոռավան բնակավայրերի /մանկապարտեզ/նախադպրոցական հաստատությունների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: |
| Կառուցվող նախադպրոցական հաստատությանմակերեսը | Գոռավան և Եղեգնավան բնակավայրերի նախադպրոցական հաստատությունների մակերեսը՝ 300 քմ: |
| Նախագծման փուլը , նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նորմատիվային պահանջները | Մեկ փուլ, աշխատանքային նախագիծ, համաձայն ՀՀՇՆ IV 11 . 05 . 02-99, ԳՕՍՏ 33100-2014, ԳՕՍՏ21.511-83 և ՀՀ Կառավարության 23.06.2011թվականի՝ թիվ 879-Ն որոշման հավելված 8<br>- Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման կարգը:<br>- ՀՀ կառավարության 19.03.2015թ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և« ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշում, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N263-Ն հրաման,<br>- ՀՀԿԱՔՊԿ նախագահի 05.04.2018թթիվ 43-Ա հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ ՀՀՇՆ II-6.02-2006 թիվ 24-Ն հրաման,<br>- «ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի շինարարական նորմերի հաստատման մասին» N253-Նհրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունիսի 16-ի N 41-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 2-ի |

| | |
|---|---|
| | - ՀՀքաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունիս 41-Նհրաման,<br>- ՀՀքաղաքաշինության նախարարի2008 թվականի փետրվ 19-Նհրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի2008 թվականի հունվ N09-Ն հրաման, ՀԿԱ քաղաքաշինության պետական կոմի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Նհրա ՀՀ կառավարության 04.05.2017թ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու» և «ՀՀ կառավարու 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ նախարարի2008թվականի հունվարի 14-իN0 հրաման,ՀԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նա 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Նհրաման<br>- ՀՀ կառավարության 04.05.2017թ «Գնումների գ կազմակերպման կարգը հաստատելու մասին» կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշումը ուժ ճանաչելու մասին»թիվ 526-Ն որոշման կարգի 33-րդ ենթակետի պահանջների, |
| Հետազննմաննախագծինկատմամբպահանջները | Չափագրական հետազոտություն ԳՕՍՏ 32868-2014 , Ինժեներաերկրաբանական հետազննություն համաձայն Գ 2014, ՇՆ 1-2.01-99 |
| Անհրաժեշտփորձաքննություն | Համալիրփորձաքննություն |

**Կատարմանենթակաաշխատանքներիհամառոտբնութագիրը**

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան և Գոռավան բնակավայրերի /**մանկապարտեզ**/նախա հաստատությունների կառուցման **նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ**

Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

Նախադպրոցական հաստատությունների կառուցում

- պատերի սվաղում ավազային շերտով
- ալյումինե դռների և պատուհանների տեղադրում
- ջեռուցման համակարգի կառուցում
- մանրահատակի կառուցում
- հիմնանորոգել շինության տանիքը
- տանքի ջրահեռացման համակարգի կառուցում
* սենյակների հարդարման աշխատանքները
- պատերի գաջի և սվաղի նորոգում
- պատերի բարձրորակ ներկում

- -էլեկտրական էներգիայի մոնտաժում
  - առաստաղի բարձրորակ ներկում լատեքսով
  * սալահատակի կառուցում
  *սանհանգույցների կերամիկական սալիկապատում
- գլխավոր հատակագծում նշել հարևան շինությունների նպատակային նշանակությունները և միջտարածությունները
- գլխավոր հատակագծում նշել հրշեջ մեքենաների մոտեցման և շրջադարձի ճանապարհները,
- տարահանման ելքերի դռների լայնությունը նախատեսել ոչ պակաս 1,2մ,
- խմբային սենքերից նախատեսել ապակենտրոնացված 2-րդ տարահանման ելքեր,
- աստիճանավանդակների դռները նախատեսել հակահրդեհային և ինքնափակվող,
- տարահանման ելքերի դռները նախատեսել շարժմանը համընթաց՝ դեպի դուրս բացվող,
- նախատեսել հրշեջ հիդրանտ (շենքից 200մ շառավղով բացակայության դեպքում):
- մուտքի դարպասների լայնությունը նախատեսել ոչ պակաս 3,5մ,
- տանիքի փայտյա տարրերը մշակել հրակայուն լուծույթով,
- նշել ավելացվող հատվածի նպատակային նշանակությունը,
- ցույց տալ կապը մանկապարտեզի հետ ամբողջական հատակագծում,

<table>
<tr><td colspan="2">• ներկայացնել ինժեներական նախագծերը</td></tr>
<tr><td>Նախագծմանհի<br>մնավորումնոր<br>մատիվայինպա<br>հանջներ</td><td>Նախագծմանհամարհիմքհանդիսացողփաստաթղթեր՝<br><br>- Ճարտարապետահատակագծայինառաջադրանք (-ներ)<br>- Տեխնիկականսեյսմիկփորձաքննություն<br>Նախագծայինառաջադրանք<br>(կազմվումէընտրվածՆախագծողիևՊատվիրատուիհամատեղմասնակցությամբևհաստ<br>- Չափագրական հետազոտություն ԳՕՍՏ 32868-2014 ,<br>Նախահաշվիհիմանվրակազմվածծավալաթերթ-նախահաշիվ,<br>որիյուրաքանչյուրաշխատանքիմիավորիարժեքըկներառի ՀՀ<br>քաղաքաշինականնորմատիվփաստաթղթերովսահմանվածբոլործախսերը, շահ<br>ինչպեսնաևբոլորտուրքերը, վճարները և հարկերը:<br>- Համալիրփորձաքննթությանեզրակացություն(-ներ),<br>Ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացույցայի<br>(ժամանակացույցը)</td></tr>
<tr><td>Նախագծիկազմ<br>ը</td><td>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆՆԱԽԱԳԻԾ<br><u>Նախագծիլրակազմումընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u><br>Ընդհանուրբացատրագիր<br>1. Ինժեներականլուծումներ(գծագրականևտեքստայիննյութեր՝այդմասնագրեր)<br>2. Շինմոնտաժայինաշխատանքներինախահաշիվ<br>3. Շինարարությանկազմակերպմաննախագիծ<br>4. Շրջակամիջավայրիպահպանմաննուղղվածմիջոցառումներ<br>5. Այլփաստաթղթեր,որոնքնախատեսվածենՀՀօրենսդրությամբ, այդթվում՝թվում<br>Քաղաքացիականպաշտպանությանուարտակարգիրավիճակներիկանխարգելման<br>ներՀՀօրենսդրությամբնախատեսվածայլմիջոցառումներ<br>Համաձայնեցումներ<br><u>Նախագծիհամաձայնեցում</u><br>1. Վեդու համայնքիքաղաքաշինությանևհողաշինությանբաժնիհետ,</td></tr>
<tr><td>Այլ<br>պահանջներ</td><td><u>Փորձաքննություններ</u><br>Քաղաքաշինական<br>փորձաքննությանեզրակացությանձեռքբերում՝Պատվիրատուիկողմից,<br>Շինարարականնյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբպահանջն<br>- նյութերի, պատրաստվածքներիշահագործմանառավելագույնժամկետ<br>- նորագույնտեխնոլոգիաներիկիրառմամբպարտադրվածնյութերի, պատրաստվածք<br>Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործվածնյութերի ե<br>ժամկետներին ներկայացվող պահանջները:<br>Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային<br>տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հաս<br>ներկայացվող պահանջները:<br>- Համալիրփորձաքննթությանեզրակացություն(-ներ),<br><br>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում<br><br>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, ն<br>ամբողջական փաթեթի ներկայացում 5օրինակ՝փաստաթղթային և էլեկտրոնային՝ A<br>PDF, Նախահաշիվը ծավալաթերթը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով (Exce<br>կնքված, կից լիցենզիայով և ներդիրով:<br>Նախագծային ամբողջ փաթեթները պետք է պատրաստվեն հայերեն և ռուսերեն լեզունե<br>ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)<br>Կատարողը ավարտված նախագծերի փաթեթները էլեկտրոնային եղանակով պա<br>պետք է հանձնի պայմանագրի ստորագրման օրվանից ոչ ուշ, քան 20 օրացույցայ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | Պատվիրատուն2 օրացուցային օրվա ընթացքում պետք է ներկայացնի իր դիտողությո հետո կատարողը պարտավոր է իրականացնել բոլոր ուղղումներն ու փոփոխու ամբողջությամբ ավարտական տեսքով նախագծանախահաշվային փաթեթներ պատվիրատուին/էլեկտրոնային և տպագիր տարբերակներով/ ոչ ուշ, քան 3 օրացուցայ |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

**Վեդու համայնքապետարան**
ք. Վեդի,Թումանյան 6
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900422102104
ՀՎՀՀ 04241258
Համայնքի ղեկավար՝ Գ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

**«Ինտերէներգիա» ՍՊԸ**
Ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. 12/70
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 220290123532000
ՀՎՀՀ 01847856
Տնօրեն՝ Հ. Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«31» հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/34/1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | *71241200* | *ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան և Գոռավան բնակավայրերի* ***/մանկապարտեզ/****նախադպրոցական հաստատություններ ի կառուցման* **աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն** | ...% | 0% | % | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | . 100.. % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Վեդու համայնքապետարան**
ք. Վեդի,Թումանյան 6
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ900422102104
ՀՎՀՀ 04241258
Համայնքի ղեկավար՝ Գ. Սարգսյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Ինտերէներգիա» ՍՊԸ**
Ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. 12/70
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 220290123532000
ՀՎՀՀ 01847856
Տնօրեն՝ Հ. Եսայան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 31 » հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/34/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ
**«Ինտերէներգիա» ՍՊԸ**
Ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. 12/70
ՀՀ 220290123532000
ՀՎՀՀ 01847856

Պատվիրատու
Վեդու համայնքապետարան
ք. Վեդի,Թումանյան 6
հh900422102336
հվhh04241258

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « »20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՅՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 31 » « հոկտեմբերի » 2022թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/34/1
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցվածծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրությաներկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրականեզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«31» հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/34/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ
պայմանագրիարդյունքըՊատվիրատուինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ____________-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի ՊատվիրատուիհանունըԿատարողիանունը
(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն
________________________
ստորագրություն

**Ընդունեց**

________________________
ազգանուն, անուն
________________________
ստորագրություն